ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 3 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ, 67, 68-րդ եւ 69-րդ հոդվածները այնքանով, որքանով սահմանափակում են արտաքին քաղաքականության բնագավառում ՀՀ Նախագահի իրականացրած գործողությունների արդյունքում ընդունված վարչական ակտերի վիճարկումը ՀՀ վարչական դատարանում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3, 6, 18 եւ 19 հոդվածներին հակասող եւ անվավեր»:

1. Դիմողը գտնում է, որ «հասարակական կազմակերպությունը, որի տեսականն է՝ «Մարդու արժանապատվության, ժողովրդավարության եւ խաղաղության գերակա արժեքներով ձեւավորված հասարակություն», կարող է ՀՀ Նախագահի գործողությունների (անգործության) իրավաչափությունը վիճարկել դատարանում:

Ըստ դիմողի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը պետք է նախատեսի համապատասխան իրավակարգավորում՝ վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցով վարչական դատարան դիմելու իրավունքի ապահովում նաեւ վարչական մարմինների արտաքին քաղաքականության արդյունքում վարչարարությամբ դրսեւորած գործողությունների կամ անգործության դեպքում: Եվ, ինչպես փաստում է դիմողը, «…վարչական դատարանները սահմանադրահիրավական վեճի առարկա դրույթներին տվել են այնպիսի մեկնաբանություն, ըստ որի՝ վարչական մարմնի արտաքին քաղաքականության իրականացման բնագավառում դրսեւորած գործողության ոչ իրավաչափ ճանաչելու հայցապահանջը դուրս է վարչական դատարանի վերահսկողությունից»:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ դատական կազմը գտնում է, որ վերոհիշյալ անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետեւյալ պատճառաբանությամբ:

Դիմողը չի ներկայացրել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ պատշաճ իրավական հիմնավորումներ: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Մինչդեռ դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ հիշյալ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ որևէ հիմնավորում:

Դատական կազմը նաեւ գտնում է, որ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց:

Ղեկավարվելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմամբ, ըստ որի՝ բոլոր այն դեպ-

քերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Միաժամանակ, դիմողը չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջեւ պատճառահետեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ վերոհիշյալ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման, նույնպես անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

3 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴԴԿՈ/1-22